



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
**ՀՐԱՄԱՆ**

No 213-Մ/2

29.03.2016թ.

**ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ  
ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՊԻՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՏԵՂԾԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի մարտի 27-ի N 203-Ն հրամանով հաստատված «Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և անցկացման» կարգի 4-րդ կետը՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .**

1. Հաստատել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման ընթացակարգը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Ստեղծել պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար տվյալ տարվա քննությունները կազմակերպելու ընդունող հանձնաժողով՝ համաձայն Հավելված 2-ի:



3. Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած նախորդ տարիների շրջանավարտների (ներառյալ 2014/2015 ուստարվա) պետական նմուշի դիպլոմ ստանալու համար փաստաթղթերի ընդունումը կազմակերպել տվյալ տարվա ապրիլի 4-ից մայիսի 13-ը ընկած ժամանակահատվածում՝ մինչև ժամը 18<sup>00</sup>-ն:

4. Քննությունների կազմակերպման ընդունող հանձնաժողովին՝ փաստաթղթերի ընդունումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարի հաստատմանը ներկայացնել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանկը և պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների

անցկացման ժամանակացույցը՝ ըստ մասնագիտությունների:

5. ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտների փաստաթղթերի ընդունելության հայտարարությունը տեղադրել նախարարության կայքէջում և հրապարակել զանգվածային լրատվության միջոցներով:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:

  
  
Mar 29 2016 5:47 PM

/ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության

կրթության և գիտության նախարարի

29.03.2016 թ. N 213-Ս/2 հրամանի

## **ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

### **ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

1. Պետական հավատարմագրում չունեցող միջին մասնագիտական կրթական ծրագրով կրթություն ստացած անձանց պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ ԿԳ նախարարի 2015 թվականի մարտի 27-ի N 203-Ն հրամանով հաստատված կարգով և սույն ընթացակարգով:

2. Պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու համար շրջանավարտը կամ նրա կողմից լիազորված անձը (այսուհետ՝ դիմումատու) փաստաթղթերի ընդունելության հայտարարությամբ սահմանված ժամկետում լրացնում է ընդունելության դիմում-հայտը և ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին:

3. Դիմումատուն, հանձնելով ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը, ստորագրում է գրանցամատյանում:

4. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) վարում է գրանցամատյանը,

2) ստուգում է ընդունելության դիմում-հայտը, այն հաստատում ստորագրությամբ և տալիս ստացական՝ փաստաթղթերն ընդունելու մասին,

3) դիմումատուին հայտնում է քննական թերթիկ ստանալու օրը,

4) դիմումատուին տալիս է քննական թերթիկը:

5. Դիմումատուն քննական թերթիկը ստանալուց հետո ստորագրում է գրանցամատյանում:

6. Քննական թերթիկը պարունակում է շրջանավարտի տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի համարը, լուսանկարը, անձնական համարը, մասնագիտությունը, պետական ամփոփիչ ատեստավորման քննությունը հանձնելու օրը և ժամը:

7. Դիմում-հայտերի ընդունման ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ընդունող հանձնաժողովը ամփոփում է փաստաթղթերը, կազմում

շրջանավարտների անվանացանկ՝ ըստ քննական առարկաների և հինգ աշխատանքային օր հետո տալիս քննական թերթիկը:

8. Քննություններից մեկ օր առաջ ընդունող հանձնաժողովի քարտուղարը՝ ընդունող հանձնաժողովի նախագահի հաստատած անվանացանկը հանձնում է պետական ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովի նախագահին:

9. Պետական ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում է նախարարության ներկայացուցիչը:

10. Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահը և նախարարության ներկայացուցիչը, նախքան շրջանավարտների քննասենյակ մտնելը, ստուգում են անձը հաստատող փաստաթղթի և քննական թերթիկի համապատասխանությունը:

11. Պետական ամփոփիչ ատեստավորման քննությունից «անբավարար» գնահատական ստանալը շրջանավարտին չի զրկում պետական ամփոփիչ ատեստավորման մյուս քննությունները հանձնելու իրավունքից, ինչպես նաև հաջորդ ուսումնական տարվա պետական ամփոփիչ ատեստավորման քննություններին շրջանավարտի մասնակցության դեպքում, պահպանվում է պետական ամփոփիչ ատեստավորման նախորդ տարվա համապատասխան մասնագիտության գծով նախատեսված քննական մյուս առարկայից ստացած «դրական» գնահատականը:

12. Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից կազմվում է պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրություն, որտեղ նշվում է պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների գնահատականները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և նախարարության լիազոր- ներկայացուցիչը: Պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների արձանագրության մեկ օրինակը նախարարության ներկայացուցիչը, քննությունների ավարտից անմիջապես հետո, ներկայացնում է ընդունող հանձնաժողովի նախագահին կամ քարտուղարին:

13. Շրջանավարտին պետական նմուշի դիպլոմ շնորհելու մասին որոշումը հաստատվում է նախարարի հրամանով:

14. Պետական ամփոփիչ ատեստավորման քննությունները դրական գնահատականներով հանձնած շրջանավարտներին պետական նմուշի դիպլոմ և ներդիր (պահպանելով նախկին դիպլոմի ներդիրի ընթացիկ գնահատականները) տրվում են՝ քննությունները կազմակերպած ուսումնական հաստատության կողմից, համապատասխան մասնագիտության քննական հանձնաժողովի նախագահի և քննությունն անցկացրած ուսումնական հաստատության

տնօրենի ստորագրությամբ, վավերացված այդ ուսումնական հաստատության պետական գինանշան ունեցող կնիքով:

Հավելված 2  
Հայաստանի Հանրապետության  
կրթության և գիտության  
նախարարի  
----- թ. -ի N ----- հրամանի

### **Քննությունների կազմակերպման ընդունող հանձնաժողով (ՔԿԱԸՀ)**

1. Ա.Արշակյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
2. Ս.Համբարձումյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի պետ (հանձնաժողովի պատասխանատու քարտուղար)
3. Վ.Խաչատրյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության լիցենզավորման բաժնի պետ
4. Կ.Մանուկյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի գլխավոր մասնագետ
5. Գ.Խաչատրյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ՆՄՄԿ վարչության ՄԿՈՒ բաժնի գլխավոր մասնագետ
6. Ա.Բաղդասարյան - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ